ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ապրիլ, 2024 թվականի № 33-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 52-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթներն առավել արդյունավետ և թափանցիկ անցկացնելու կարևորությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 52-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   1) Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 52-Լ որոշման հավելված 1-ով սահմանված՝ Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման կարգը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

5 ապրիլ, 2024 թվականի
ք. Երևան

Հավելված 1
Հանրային հեռարձակողի խորհրդի
5 ապրիլ, 2024թ. N 33-Լ որոշման

Հաստատում եմ՝
Հանրային հեռարձակողի
խորհրդի նախագահ
_____ Ա. Շիրինյան

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Մրցույթով ապահովվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղը համալրելու հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
3. Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման նպատակով Հանրային հեռարձակողի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) որոշում է ընդունում Մրցույթ հայտարարելու մասին: Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է Խորհրդի պաշտոնական կայքէջում Խորհրդի համապատասխան որոշման ընդունմանը հաջորդող 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ միաժամանակ նշելով նաև հրապարակման ամսաթիվը:
4. Հայտարարության մեջ նշվում են՝
   1) թափուր պաշտոնին հավակնող թեկնածուին ներկայացվող պահանջները.
   2) Մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, Մրցույթի անցկացման (Մրցույթի արդյունքների ամփոփման) օրը և ժամը:
5. Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:
6. Մասնակցի դիմումը չի ընդունվում, եթե այն կամ դրան կցված փաստաթղթերը չեն համապատասխանում Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությամբ սահմանված պահանջներին:
7. Մասնակիցը կարող հետ վերցնել Մրցույթի մասնակցելու վերաբերյալ իր դիմումը մինչև Մրցույթի անցկացման (Մրցույթի արդյունքների ամփոփման) օրվան նախորդող

աշխատանքային օրվա ժամը 17:00-ն՝ Խորհրդի աշխատակազմին ներկայացնելով համապատասխան դիմում:

8. Մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր Մրցույթ, եթե.
   1) Մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ
   2) ներկայացված դիմումները կամ դրանց կցված փաստաթղթերը չեն համապատասխանում Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությամբ սահմանված պահանջներին կամ
   3) ներկայացված դիմումները հետ են վերցվել Մրցույթի մասնակիցների կողմից մինչև քվեարկության անցկացումը կամ
   4) Մրցույթի արդյունքներով ոչ ոք հաղթող չի ճանաչվել:
9. Նոր Մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն կարգով սահմանված ժամկետներում և պայմաններով:
10. Փաստաթղթերը ներկայացվում են Խորհրդի աշխատակազմ Մրցույթի անցկացման մասին հայտարարությունը Խորհրդի պաշտոնական կայքէջում հրապարակվելու օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը Խորհրդի աշխատակազմի կողմից չեն ընդունվում:
11. Խորհուրդը Մրցույթի արդյունքներն ամփոփում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում Խորհուրդը կարող է երկարացնել այդ ժամկետը ևս 10 աշխատանքային օրով:
12. Նախքան քվեարկությունը Մրցույթի մասնակիցները կարող են հրավիրվել հարցազրույցի:
13. Խորհուրդը Մրցույթում հաղթողին որոշում է բաց քվեարկությամբ: Քվեարկությունը կարող է անցկացվել քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկում Մրցույթի մասնակիցները համարակալվում են այբբենական կարգով ըստ ազգանունների:
14. Մրցույթում հաղթողին որոշելու նպատակով անցկացվող քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկում է Մրցույթի մասնակիցներից միայն մեկի օգտին կամ քվեարկում է «բոլորին դեմ»:
15. Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն ստացել է Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցող անդամների ձայների առնվազն երկու երրորդը, եթե քվեարկությանը մասնակցել է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
16. Եթե քվեարկության արդյունքներով Մրցույթի մասնակիցներից որևէ մեկը չի ստանում Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցող անդամների ձայների առնվազն երկու երրորդը, ապա սույն կարգով սահմանված ընթացակարգով անց է կացվում նոր քվեարկություն առնվազն 2 ձայն ստացած Մրցույթի մասնակիցների միջև: Սույն կետով նախատեսված նոր քվեարկության արդյունքներով Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն ստացել է Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցող անդամների ձայների առնվազն երկու երրորդը, եթե քվեարկությանը մասնակցել է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Եթե նոր քվեարկության արդյունքներով Մրցույթի մասնակիցներից որևէ մեկը չի ստանում Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցող անդամների ձայների առնվազն երկու երրորդը, ապա Մրցույթը համարվում է չկայացած:

17. Մրցույթի արդյունքներով Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
    1) Մրցույթը չկայացած համարելու մասին.
    2) Մրցույթում հաղթող ճանաչելու մասին:
18. Սույն կարգի 17-րդ կետով նախատեսված ցանկացած որոշման ընդունման դեպքում այն հրապարակվում է Խորհրդի պաշտոնական կայքէջում:
19. Խորհրդի կողմից Մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի նախագահը գումարում է Խորհրդի նիստ՝ Մրցույթում հաղթողին Հանրային հեռարձակողի գործադիր տնօրեն նշանակելու նպատակով: